«Հաստատում եմ»՝ _____

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր՝ Ե. Սերոբյան

«3» սեպտեմբերի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Հրանտի Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասով՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» սովորողի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները տրամադրվում է երեք մակարդակում.

1) դպրոցական մակարդակ
2) տարածքային մակարդակ
3) հանրապետական մակարդակ:

Սույն կարգով (13 ապրիլի 2017թ. հրաման N 370-Ն) կարգավորվում են կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հետ կապված խնդիրները («Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ 23.03.2018; 27.03.2019; 26.10.2022; 10.02.2023):

Հայաստանի Հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության քաղաքականության իրականացման նպատակով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ խոսքի, ինչպես և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները ներկայումս կիրառվում են ԱՀԿ կողմից ընդունված՝ երեխաների և երիտասարդների Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (սովորող, ծնող, մանկավարժական աշխատողներ և այլն)՝ ՖՄԴ-ԵԵ («Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը հաստատելու մասին», ՀՀ կրթության և գիտության նախարարի 13.04.2017թ. N370-Ա/2 հրամանի հավելված): Սույն չափանիշները մշակվել են՝ առաջնորդվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

2022թ. Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին որոշմամբ ամրագրված է, որ ուսումնական հաստատությունը կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կրթական գործընթացի մասնակիցներին (սովորող, ծնող, մանկավարժական աշխատողներ և այլն) տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ (Հոդված 12, կետ 3, 7-րդ մաս): Այն նախատեսում է անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցների կիրառում այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ կրթական գործընթաց ներգրավելու նպատակին համապատասխան իրականացվում են բարեփոխումներին զուգահեռ և, առավելագույնս, նպաստում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ այդ թվում և խոսքային խանգարումներ ունեցող երեխաների ուսումնական ու սոցիալական զարգացմանը և հասարակության մեջ վերջիններիս ներառմանը («Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին՝ 26.10.2022):

Սակայն, կրթական այս բարեփոխումների շրջանակներում, տարածքային մակարդակի գնահատման առումով, լոգոպեդական գնահատման (ախտորոշման) գործընթացում առաջանում են որոշակի խնդիրներ, քանի որ գնահատման այսպիսի գործընթացի հիմքում այս ժամանակաշրջանում հաշվի էին առնվում ֆունկցիաների հինգ (ներկայումս՝ 8) հիմնական խանգարումներ՝ ձայնի և խոսքի, լսողության, տեսողության, ինտելեկտուալ (մտավոր), շարժողական (ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 370-Ն հրաման, Ձև 4): Ֆունկցիայի խանգարումների վրա հիմնված նման դասակարգումը չէր կարող հիմք հանդիսանալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման տեսակի, ժամանակահատվածի, տևողության և ծավալների որոշման համար, քանի որ ֆունկցիայի գնահատումը ինքնին բժշկական գործընթաց է, որը ենթադրում է նեղ մասնագիտական միջամտություն (Մ.Հարությունյան, Գ.Հովյան, Լ. Սարատիկյան 2019; Ա.Ասլանյան, Գ.Գրիգորյան, Գ.Հովյան 2022):

Երեխայի խոսքային խնդիրների հետ կապված հարցերը, խոսքային խանգարման տեսակն ու աստիճանը որոշելու համար առաջնահերթ պետք է լինի լոգոպեդի կողմից իրականացված գնահատումը, որով էլ հիմնավորվում է «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով առաջարկվող ատենախոսության արդիականությունը:

Խոսքային խանգարումների հետազոտումը լոգոպեդական աշխատանքի կազմակերպման կարևորագույն նախապայմանն է և այս գործընթացի ճիշտ կազմակերպումից է կախված լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը (Ա. Ասլանյան 2023): Գոյություն ունեցող գիտական ուսումնասիրություններն, որոնք ուղղված են խոսքի հետազոտման կազմակերպմանն ըստ ֆունկցիոնալ գնահատման առանձնահատկությունների, լիովին չեն բավարարում խոսքային խանգարումների գնահատման հիման վրա կազմակերպվող լոգոպեդական աշխատանքի ուղղվածությանը և կարիք ունեն բազմամակարդակ և լայնածավալ ուսումնասիրությունների:

Ելնելով վերոնշյալից կարող ենք հավաստել, որ ատենախոսի կողմից

առաջարկվող բացառիկ նոր մոտեցման հիման վրա Հայաստանում առաջին անգամ է գիտականորեն հիմնավորվում խոսքի գնահատման գործընթացում առաջադրվող մոդելի կիրառման անհրաժեշտությունը տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում: Լոգոպեդական գնահատման նոր մոդելը ֆունկցիոնալ հետազոտման տեսանկյունից հնարավորություն կընձեռի ԱՀԿ կողմից ընդունված՝ Ֆունկցիոնալության, հաշմանդամության և առողջության միջազգային դասակարգման չափորոշիչներին համապատասխան (ՖՄԴ-ԵԵ) իրականացնել խոսքային խանգարումների գնահատման գործընթացը, իսկ կրթական հաստատություններում իրացնել խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքային խնդիրների հաղթահարման գործընթացը՝ օժանդակելով սույն հետազոտության շրջանակներում նոր գիտահետազոտական հիմնախնդիրներ առաջադրելու հնարավորություններին (A. Aslanyan, G. Hovyan Yerevan 2020; A. Aslanyan 2022; 2023):

Այսպիսով, ՀՀ-ում իրականացվող ներկայիս բարեփոխումները հնարավորություն են ընձեռում վերանայելու զարգացման խանգարումներ ունեցող երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համակարգը, ինչը թույլ է տալիս առավել օբյեկտիվ և բազմակողմանի գնահատել անձի կարողությունները և սահմանել հաշմանդամությունը՝ հաշվի առնելով ոչ միայն առողջական խնդիրը, ախտորոշումը, կարողությունը, այլ նաև այն միջավայրային գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են գործունեության վրա: Մոդելի ներդրման հիմնական նպատակն է անձի բազմակողմանի գնահատված կարիքներին համարժեք մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցումը:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամության և հաշմանդամների իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ նման անձանց սոցիալական ներառման, իրավահավասարության խթանման և հավասար հնարավորությունների ստեղծման խնդիրները մշտապես գտնվել են պետության ուշադրության ներքո: Չնայած այս հանգամանքին, օրենքով նախատեսված շատ դրույթներ այլևս

համահունչ չեն իրականությունում առկա իրավահարաբերությունների բնույթին և էությանը:

Ելնելով հիմնախնդրի արդիականությունից, կոնկրետ նպատակից, հետազոտության վարկածից, գիտական նորույթից, տեսական և գործնական նշանակությունից կարելի է հաստատել, որ սույն հետազոտության իրականացման շրջանակներում բավարար չափով կատարված է խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի զարգացմամբ զբաղվող մասնագետների, ուսուցիչների, ինչպես նաև ֆունկցիոնալ գնահատում իրականացնող բժիշկների առաջավոր փորձի ուսումնասիրում և ընդհանրացում, անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների կիրառման, ինչպես նաև՝ փորձարկվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն:

Ուսումնասիրվել և սահմանվել են լոգոպեդական գնահատման արդյունքում դպրոցահասակ երեխայի խոսքային խանգարման հայտնաբերման և, ըստ այդմ, լոգոպեդական ծառայությունների մատուցման առանձնահատկությունները, ինչպես նաև, անձի ֆունկցիոնալության գնահատման նախադրյալները՝ մշակված մոդելի միջոցներով.

- սահմանվել է լոգոպեդական գնահատման մոդելավորման նպատակով կիրառվող մեթոդական ուղեցույցի հիմանական բովանդակությունը, ուղղվածությունը, բնույթը խոսքի գնահատման գործընթացում,
- բացահայտվել է լոգոպեդական գնահատման նպատակով կիրառվող ֆունկցիոնալության գնահատման որակիչների, ինչպես նաև՝ ըստ սահմանված որակիչների խոսքի գնահատման մեթոդական ուղեցույցների՝ գնահատման ցուցիչների վերաբերյալ երեխաների խոսքի զարգացմամբ զբաղվող մասնագետների, ուսուցիչների, ինչպես նաև՝ ֆունկցիոնալ գնահատում իրականացնող մասնագետների տեղեկացվածության մակարդակը,
- մշակվել է խոսքի գնահատման համակարգային մոդել՝ կրթական հաստատություններում իրականացվող խոսքի գնահատման հստակ և ստույգ ձևակերպված բնութագրիչների և որակիչների ներկայացմամբ:

Հիմնավորված է հետազոտության տեսական նշանակությունը, որն առանձնանում է լոգոպեդների, ֆունկցիոնալ գնահատում իրականացնող, ինչպես նաև խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի գնահատմամբ և զարգացմամբ զբաղվող հարբժշկական մասնագետների համար առաջարկվող մոտեցումների արդյունավետության, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների տեսական հիմնավորմամբ, խոսքային խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցական և խոսքի զարգացման համար անհրաժեշտ տեսական դրույթների զարգացման հիմնական միտումների և նրանց ցուցաբերվող մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնմամբ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչների և գործիքների կիրառման ուսումնասիրմամբ և տեսական վերլուծությամբ:

Ինչ վերաբերում է հետազոտության գործնական նշանակությանն, ապա այն կարևորում ենք տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում իրականացվող լոգոպեդական գնահատման աշխատանքների բովանդակության, մեթոդների և պայմանների գործնական մշակման և մանկավարժական գործընթացում դրանց ներդրման անհրաժեշտությունը՝ ըստ ՖՄԴ բաղադրիչ ոլորտների և համապատասխան ծածկագրերն արտացոլող տեղեկատվական շտեմարանի կիրառման, ինչը հնարավորություն է տալիս առավել ճգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ խոսքային խանգարում ունեցող երեխայի ուսումնական կարողությունների առկա մակարդակը գնահատելու և խոսքի զարգացման հնարավորություններն ուսումնասիրելու համար:

Այսպիսով, Աննա Հրանտի Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքն առանձնանում է թե տեսական, թե գործնական և կիրառական նշանակության տեսանկյունից, ինչը նաև երաշխավորված է հեղինակի հրատարակումներով, զեկույցներով, ստացված արդյունքների վերլուծության հրապարակային քննարկումներով և դրանք տարածքային

մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների պրակտիկա ներդնելու փաստերով:

Ատենախոսությունը շարադրված է 144 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 9 աղյուսակ, 12 տրամագիր, 2 գծապատկեր, 2 նկար և 2 հավելված:

Ամբողջապես դրական գնահատելով Աննա Հրանտի Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքն, այնուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել հետևյալ դիտարկումներն ու բացթողումները.

1. Ատենախոսության առաջին գլխի վերնագրի ձևակերպման մեջ կա բացթողում, քանի որ սեղմագրում այն ներկայացված է այլ կերպ:
2. Կարծում ենք՝ հետազոտությունն էլ ավելի արժեքավոր կլիներ, եթե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողին տրամադրվող աջակցող ծառայություններում լոգոպեդական գնահատման ժամանակահատվածը, տևողությունը, ծավալը և ըստ գնահատման տրամադրված գրաֆիկը մշակվեր հաստատության աջակցության խմբի կողմից և ըստ հեղինակի կողմից առաջադրվող մոդելի լիներ պարտադիր, որը և լոգոպեդական ծառայությունների տրամադրման արդյունավետության և որակի ապահովման հիմք կհանդիսանար:
3. Լոգոպեդական գնահատմանն ուղղված գործիքակազմը կարելի էր ներկայացնել ատենախոսական աշխատանքի հավելվածում, որը կընդգծեր ՖՄԴ-ի «D» կոդերի բնութագրիչները լոգոպեդական գնահատման տեսանկյունից:
4. Ատենախոսության մեջ կան առանձին մտքերի կրկնություններ /ներածություն, գլուխ 2-րդ, 3-րդ/, քերականական սխալ ձևակերպումներ /էջ 58,117 և այլն/:

Նշված դիտողությունները, սակայն, չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը, այն ինքնուրույն, ավարտուն և գիտական աշխատանք է, որն էլ առանձնանում է իր արդիականությամբ, նորույթով, տեսական և գործնական նշանակությամբ: Կարելի է հավաստել, որ ատենախոսության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները լրացնում են լոգոպեդական առաջավոր փորձը գիտահետազոտական նոր փաստերով:

Անցկացված հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը շեշտադրված են տարբեր բնագավառների գիտական նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցմամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային մեթոդների, վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ, հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութերի մանրազնին վիճակագրական մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Ատենախոսության սեղմագիրը և գիտական հրապարակումները վկայում են աշխատանքի հիմնական դրույթները:

Վերոնշյալը թույլ է տալիս կատարելու հետևյալ ընդհանուր եզրակացությունը.

Աննա Հրանտի Ասլանյանի «Լոգոպեդական գնահատման մոդելավորումը տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, տարբերվում է իր նորույթով, տեսական, գործնական և կիրառական նշանակությամբ:

Հետազոտության հիմնական դրույթները, հետևությունները և արդյունքները, մասնագիտական սեմինարների, վերապատրաստման և դասախոսությունների մշակման նպատակով, կարող են հիմք հանդիսանալ ինչպես Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, Շիրակի պետական համալսարանի «Լոգոպեդիա», «Հատուկ մանկավարժություն» բաժնում

դասախոսների, ուսանողների համար, այնպես էլ՝ ՀՀ Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների, ՀՄԿ-ի և վերականգնողական կենտրոնների մասնագետների կողմից իրականացվող նոր հետազոտությունների և գնահատման գործնական փորձի ներդրման համար:

Կարծում ենք, որ համընդհանուր ներառականության համատեքստում խոսքային խանգարումներ ունեցող երեխաների ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված հեղինակի մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու կրթության առանձնահատուկ պայմանների վկայագրման գործընթացը, իսկ ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցման, դաստիարակության, բազմակի կարիքների հաղթահարման և խոսքային խանգարման գնահատմանն ուղղված մշակված մոդելի կիրառումը նպաստում է նրանց կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Սույն ատենախոսությունը խոսքային խանգարումների գնահատման արդյունավետության բարձրացմանն ուղղված լոգոպեդական համալիր մեթոդների կիրառմանը միտված գիտական, հետազոտական աշխատանք է՝ հարուստ մեթոդական ցուցումներով և հանձնարարականներով, ինչն առանձնապես ընդգծում է լոգոպեդական գնահատման արդյունավետությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Աննա Հրանտի Ասլանյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.03- «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է «Մանկավարժության» ամբիոնի՝ 2024թ.-ի սեպտեմբերի 3-ի թիվ 2 նիստում:

Ամբիոնի նիստին արտահայտվել են դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ս. Համբարյանը:

Նիստին մասնակցել են մ.գ.դ, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կ.գ.թ., դոցենտ՝ Կ. Պետրոսյան